«ՎԱՆԱՁՈՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ N 1 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Լ-1-Գ-1

«01» փետրվարի 2018 թ.

ք. Երևան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Մկրտումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1571221.7 (Մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր քսանմեկ դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է

պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 1930052041960100	«ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ ք. Երևան ք.Երևան,Էրեբունի, Ավանեսովի նրբ. 8/1, 22 ՀՎՀՀ՝ 00464307 «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Հ/Հ 16048272962300
Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն ..... Լ. Մկրտումյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1

«01» փետրվարի 2018թ. Կնքված

N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-L-1-Գ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը**	ժամկետը*
3	15612100	Ալյուր բարձր տեսակի	ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	197	94560	480	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	480	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
19	15331491	Վարունգի և լոլիկի մարինադ խառը	ՀԱՅՐԵՆԱՑ ԲԱՐԻՔՆԵՐ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	348	46771.2	134.4	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	134.4	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
38	15332410	Չոր մրգեր (չիր)	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1215	97200	80	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	80	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
41	15842100	Շոկոլադ	ԼԱՄԶՈՒՐ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	980	73500	75	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	75	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
44	15842300	Թխվածքաբլիթ 1	Ա.ԱՎԵՏՅԱՆԻ ԱՍԱ ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	550	55000	100	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	100	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
65	15112150	Հավի միս	ԲԱՅՍԱԴ ՍՊԸ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	942	273180	290	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	290	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
67	15131100	Նրբերշիկ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	977	151435	155	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	155	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
68	15131121	Երշիկ եփած	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	1030	159650	155	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	155	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
69	15221000	Ձուկ սառեցված	ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	1089	424710	390	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	390	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
81	15421100	Ձեթ	Կոմպանիա բլագո ՍՊԸ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	լ	555	106560	192	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	192	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
91	15333100	Տոմատի մածուկ	ՀԱՅՐԵՆԱՑ ԲԱՐԻՔՆԵՐ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	575	22137.5	38.5	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	38.5	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
97	15331187	Եգիպտացորեն պահածո	ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	688	13072	19	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	19	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018

99	15331151	Լոբի հատիկ	Անուշ լինի ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	740	42920	58	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	58	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
106	15618000	Բլղուր	ԷՅ ՋԻ Ֆուդ ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	277	10526	38	ք. Վանաձոր, Տարոն 4, ՄՄՇ թիվ 23	38	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
Ընդամենը							**1571221.7**				

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*** Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

Հացամթերք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
3	15612100	Ալյուր բարձր տեսակի	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %:
Մարինադներ			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
19	15331491	Վարունգի և լոլիկի մարինադ խառը	Ապակե տարաներով, պտղի պարունակությունը տարայում 70 % -ից ոչ պակաս, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %:
20	15331491	Խաղողի տերև պահածոյացված	Ապակե տարաներով, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %:
Մրգեր			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
38	15332410	Չոր մրգեր (չիր)	Չոր մրգեր, առանց կորիզի (բացի խուրմայից), պատրաստված հետևյալ մրգերից (հետևյալ հարաբերակցությամբ) ծիրանի 20%, դեղձի 10%, բալի 10%, կեռասի 10%, սալորի 10%, թզի 10%, տանձի 10%, խնձորի 10%, խուրմայի 10%: Չափածրարված մինչև 25 կգ զանգվածով, պահված 5-ից մինչև 20 C ջերմաստիճանում, 70%-ից ոչ ավելի խոնավության պայմաններում:
Քաղցրավենիք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
41	15842100	Շոկոլադ	Կոնֆետներ շոկոլադե: Պինդ, համասեռ, արտաքին մակերեսը փայլուն, ծակոտկեն խոռոչավոր, ձևը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, մանրեցման աստիճանը 92 %-ից ոչ պակաս, միջուկի զանգվածային մասը՝ 20 %-ից ոչ պակաս, առնվազն 15 գ զտաքաշով: Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 60 %

44	15842300	Թխվածքաբլիթ 1	Առանց միջուկի, բաղադրությունը՝ ալյուրի կոշտ տեսակ, մարգարին, շաքարավազ, աղ, վանիլին: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %
		Մսամթերք	
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ ընդունված «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) կանոնակարգի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի			
65	15112150	Հավի միս	Հավի միս սառեցրած, բրոյլեռ տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, պահված -10-ից մինչև -20 °C ջերմաստիճանի պայմաններում, բժշկական փաստաթղթերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 % Պարտադիր պայմաններ՝ տեղափոխումը միայն ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված համապատասխան թույլտվությամբ տրանսպորտային միջոցներով:
		Երշիկեղեն	
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ ընդունված «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) կանոնակարգի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
67	15131100	Նրբերշիկ	Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից, փաթեթավորումը վակուումային կամ ոչ վակուումային: Մսի պարունակությունը ոչ պակաս քան 60 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %
68	15131121	Երշիկ եփած	Երշիկ եփած՝ պատրաստված տավարի և խոզի մսերից, խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Մսի պարունակությունը ոչ պակաս քան 60 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%:
		Ձկնամթերք	
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
69	15221000	Ձուկ սառեցված	Ձուկ խորը սառեցված՝ առանց գլխի և փորոտիկի, խորը սառեցված բլոկներով, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով և տեղադրված ստվարաթղթե արկղի մեջ Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%:
		Յուղեր	
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 883 որոշմամբ ընդունված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
81	15421100	Ձեթ	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված , փաթեթավորումը՝ 22լցված մինչև 5լ տարողություններում: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %
		Համեմունքներ	
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			

91	15333100	Տոմատի մածուկ	Համասեռ խառնուրդ, առանց մուգ խառնուրդների, կաշվի, կորիզի և այլ խոշոր մասնիկների մնացորդների, առանց կողմնակի համերի և հոտերի: Կարմիր, նարնջակարմիր կամ մորեկարմիր գույների: Ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 1 կգ տարողությամբ տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 % :
Ընդեղեն, Ձավարեղեն, Մակարոնեղեն			
Ընդեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
97	15331187	Եգիպտացորեն պահածո	Եգիպտացորեն պահածոյացված , որն անցել է համապատասխան մշակում, մետաղյա կամ ապակյա տարաներով, բաղադրությունը՝ եգիպրացորեն, աղ, ջուր, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %:
99	15331151	Լոբի հատիկ	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ 15,1-18,0 %, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:
Ձավարեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
106	15618000	Բլղուր	Բլղուրին բնորոշ, առանց թթվահամության, դառնահամության, բորբոսահոտի, նեխահոտի և կողմնակի համի և հոտի: Դեղին գույնի, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները՝ 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ

Տնօրեն ..... Լ. Մկրտումյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«01» փետրվարի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-L-1-Գ-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	15612100	Այլուր բարձր տեսակի		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
19	15331491	Վարունգի և լոլիկի մարինադ խառը		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
38	15332410	Չոր մրգեր (չիր)		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
41	15842100	Շոկոլադ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
44	15842300	Թխվածքաբլիթ 1		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
65	15112150	Հավի միս		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
67	15131100	Նրբերշիկ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
68	15131121	Երշիկ եփած		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
69	15221000	Ձուկ սառեցված		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
81	15421100	Ձեթ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
91	15333100	Տոմատի մածուկ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
97	15331187	Եգիպտացորեն պահածո		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
99	15331151	Լոբի հատիկ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
106	15618000	Բլղուր		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
Ընդամենը															

*** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:**

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:**

ԳՆՈՐԴ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ

Տնօրեն ..... Լ. Մկրտումյան
/ստորագրություն/
Կ.Տ